



Ազդարարության Trumpet's Sound **փող**

53-րդ ՏԱՐԻ, ԱԽՏՐԱԼԻԱ
ՅՈՒԼԻԱ - ՕԳՈՍՏՈՍ 2022

«ԱԶԳԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՓՈՎ»
երկամսյա հոգեւոր թերթ

Պատասխանատու խմբագիր՝
հովիւ Հրաչ Գոյունեան

ACM AUSTRALIA
PO BOX 1593,
CHATSWOOD NSW 2057
EMAIL: hkiujian@acmaust.org
URL: www.acmaust.org



Բովանդակութիւն

Արդեօք հիրաւե՞ր եք	3
<i>Հովիւ՝ Հրաչ Գոյունեան</i>	
Տիտանիկը	5
<i>Ռէքս Տիրլավ</i>	
Բարի համբաւ	7
<i>Ներսէս եղբ. Պոյանեան</i>	
Հարուստ մեռնիլ ուզող նաւաստին . . .	10
<i>Քաղուած</i>	
Յիսուսին հետեւիլ	12
<i>Քաղուած</i>	
Հիւանդանոցի պատուհանը	13
<i>Քաղուած</i>	
Փոքր հաւատքը կրնայ լեռներ տեղաշարժել	15
<i>ԱՄՄ</i>	

Կազմի նկարը՝ Կարմիր ծաղիկ, ACM,
Ապրիլ 2007թ.:

Փա՛նջ տուէք Աստուծոյ՝

- Իր բարութեան եւ մեր բոլոր կարիքները հոգալու համար,
- Երեւանի մէջ նոր շէնք ձեռք բերելու համար,
- աղքատներուն եւ կարիքաւորներուն օգնելու հնարաւորութեան համար,
- Աւստրալիայէն Հայաստան ուղարկուած ապրանքներուն համար,
- հիւանդներու կարիքները հոգալու համար:

Աղօթքի նիւթեր՝

- Աղօթէ՛ք օգոստոսին Հայաստան այցելող միսիոնարական խումբի համար:
- Աղօթէ՛ք, որ Աստուծոյ Հոգին առաջնորդէ մեզ մեր բոլոր գործերուն մէջ:
- Խնդրէ՛ք Տիրոջը օրհնել մեր հովանաւորներուն եւ աջակիցներուն:

Սոյն թերթի ծախսերը կը հոգացուի հաւատացեալներու սրտաբուխ նուէրներով:

Արդեօք հիւրասէ՞ր էք

«Սուրբերուն պէտքերուն հաղորդ եղէ՛ք. հիւրասիրութեան ետեւէ եղէ՛ք» (Հռովմ. 12:13):

Աստուած կը քաջալերէ մեզի հիւրասիրութեամբ ծառայել ամէն օր:

«Հիւրասիրութիւնը մի՛ մոռնաք, վասն զի անով ոմանք հրեշտակներ ընդունեցին առանց գիտնալու» (Եբր. 13:2):

«Իրարու հիւրասիրութիւն ցուցուցէ՛ք առանց տրտունջ ընելու» (Ա Պետ. 4:9):

Ես կը սիրեմ այս համարները, որոնք կը խրախուսեն մեզ հիւրասէր ըլլալ: Բարի սամարացիին ամէն ինչ ըրաւ խեղճ վիրաւորին օգնելու համար:

«Հետեւեալ օրը, երբ կ'ելլէր անկէ, երկու դահեկան հանեց՝ պանդոկապետին տուաւ եւ անոր ըսաւ. «Հոգ տար աստոր ու ինչ որ աւելի ծախք ընես, ետ դառնալուս ես քեզի կը վճարեմ»:

Որքա՞ն կ'արժէ հիւրասէր ըլլալը.

1. Գումար. շատ անգամ մեր պատճառաբանութիւնը ծախսն է: Այո՛, երբեմն ինչ որ մէկուն վկայելու համար գումար պէտք է ծախսենք, բայց կը մոռնանք, որ Տէրը կ'ապահովէ մեր բոլոր կարիքները: Անապաշխար մարդկանց ընթրիքի հրաւիրելով կարող ենք հող պատրաստել Քրիստոսի սիրոյ մասին պատմելու: Աստուած մեր սրտերուն մէջ որքա՞ն մեծ ուրախութիւն կը դնէ, երբ անոնք կ'ընդունին Յիսուսին որպէս Փրկչի, այդ ժամանակ ծախսը ոչինչ կը թուայ կորած հոգիներու փրկութեան համեմատած:

2. Ժամանակ. Ժամանակ գտէ՛ք հիւրասիրութիւն ցուցաբերելու համար: Շաբաթը 168 ժամ ունինք, երկու ժամով ընկերոջդ տուն հրաւիրելը գուցէ կեանքեր փոխէ, վերքեր բուժէ, մխիթարութիւն եւ ուրախութիւն պատճառէ ինչ որ մէկուն: Արդեօ՞ք պատրաստ էք ձեր ժամանակը տրամադրել ինչ որ մէկուն Քրիստոսին առաջնորդելու համար:

3. Ջանք. Այո՛, մենք շատ ջանք կը գործադրենք կեանքին մէջ շատ բաներու համար, բայց հիւրընկալ ըլլալու համար ջանք գործադրելը բան մըն է, որ Աստուած կ'ուզէ տեսնել հաւատացեալներուն մէջ: Տէրը պիտի օրհնէ ձեր ջանքը եւ համապատասխանաբար հատուցանէ ձեզ:

Նախքան ձեր ընկերներուն հրաւիրելը, աղօթեցէ՛ք ու Տիրոջմէ իմաստութիւն խնդրեցէ՛ք: Աղօթեցէ՛ք, որ օրհնութիւն դառնանք անոնց համար, եւ անոնք՝ ձեզ համար. զգո՛յ՜ եղէք եւ համոզված եղէք, որ զրոյցը բամբասանքի չի վերածուիր, այլ որ Տէրը փառաւորուի այդ ամէնուն մէջ:

Օր մը ես եւ տիկինս հրաւիրուած էինք, երբ հասանք այնտեղ, տեսանք հրաւիրուած այլ ընկերներ: Ես սովորաբար կ'աղօթեմ, որ Տէրը վերահսկէ մեր խօսակցութիւնը, եւ որ մենք փառք բերենք Իրեն, եւ ահա թէ ինչ եղաւ աւարտին: Աստուածաշունչէն հատուած մը կարդացինք, աղօթեցինք, եւ զրոյցը Աստուծոյ Խօսքին շուրջ ընթացաւ, բոլոր ներկաները օրհնուեցան եւ Աստուած փառաւորուեցաւ: Մենք բոլորս տունէն դուրս եկանք միսիթարուած եւ օրհնուած:

Ե՞րբ վերջին անգամ ձեր ընկերներուն ընթրիքի հրաւիրեցիք:

Հ. Գ.

«Յոյսով ուրախ եղէ՛ք. նեղութեան մէջ համբերեցէ՛ք. ստէպ աղօթքի կեցէ՛ք. սուրբերուն պէտքերուն հաղորդ եղէ՛ք. հիւրասիրութեան ետեւէ եղէ՛ք. ձեզ հալածողները օրհնեցէ՛ք եւ մի՛ անիծէք. խնդացողներուն հետ խնդացէ՛ք եւ լացողներուն հետ լացէ՛ք. իրարու վրայ միեւնոյն խորհուրդը ունեցէ՛ք. ամբարտաւանութիւն մի՛ ընէք, հապա խոնարհներուն հետ խոնարհեցէ՛ք, ինքզինքնիդ իմաստունի տեղ մի՛ դնէք. չարութեան փոխարէն մէկո՛ւն չարութիւն մի՛ հատուցանէք. բոլոր մարդոց առջեւ բարի բաներ ընելու հոգ տարէ՛ք: Որչափ կարելի է ձեզի՝ ամէն մարդու հետ խաղաղութիւն ունեցէ՛ք: Սիրելիներ, վրէժխնդրութիւն մի՛ ընէք ձեր անձերուն համար...»

Հոովմ. 12:12-19

Տիտանիկը

Արդեօ՞ք դիտած էք «Տիտանիկ» ֆիլմը: Ձիս գրաւած էր, այսպէս կոչուած, չխորտակուող նաւի եւ անոր վրայ ճանապարհորդող մարդկանց պատմութիւնը: Ֆիլմին մէջ յատկապէս մէկ տեսարան մը կայ, որը չեմ կրնար մոռնալ. Ատլանտեան ովկիանոսի վրայ, կէս գիշեր է, ծովը կատարեալ հանգիստ է, աստղերը կը փայլին դաժան ցուրտ գիշերուայ մէջ: «Տիտանիկը» ամբողջ հզօրութեամբ առաջ կը շարժուի, չնայած որ նաւապետին զգուշացուցած էին սառնալեռներու մասին: Սա պարզապէս ծովային ճամփորդութիւն մը չէր, այն նաեւ էկոյի ճամփորդութիւն էր: Երբ դիտորդ-նաւաստիները նկատեցին իրենց առջեւ գտնուող սառնալեռը, շարժիչներու աշխատանքը հակադարձեցին, եւ դեկը ամուր դարձուցին: Բայց հսկայական նաւը շրջելու համար ժամանակ կը պահանջէ: Սառեցնող լռութիւն եւ անհանգըստութիւն կը տիրէ, քանի որ նաւը կը շարունակէր ընթանալ՝ իր սեփական թափի ներքոյ դէպի վերամբարձ սառնալեռը: Թանկարժէք վայրկեանները կ'անցնին, երբ անձնակազմը սառած սարսափով կը հետեւէ՝ մտածելով, թէ արդեօք դեկը ժամանակին պիտի շրջէ նաւը՝ բախումէն խուսափելու համար: Դեկը, որն իրականութեան մէջ չափազանց փոքր էր հսկայ նաւի նկատմամբ, կամաց-կամաց նաւի ուղղութիւնը թեքեց, սակայն «Տիտանիկը» պարզապէս չկրցաւ բաւական արագ փոխել ուղղութիւնը: Սառնալեռը բախուեցաւ նաւի մէկ կողմին՝ մեծ ճեղք առաջացնելով, որու արդիւնքով ուղեւորներու եւ անձնակազմի մեծ մասը մահացան: Նաւը, որը մարդիկ կը պնդէին, թէ նոյնիսկ Աստուած չի կրնար խորտակել, իրականութեան մէջ խորտակուեցաւ Ատլանտեան ովկիանոսի յատակը:

Ես չեմ ուզեր հռեռեսի տպաւորութիւն ձգել, բայց իրական իրադարձութեան այս ցնցող վերստեղծումը ստիպեց զիս լաւ մտածել մեր՝ որպէս անհատներու կամ եկեղեցիներու՝ անհրաժեշտութեան պարագային ուղղութիւնը շուտ փոխելու ունակութեան մասին: Հետաքրքրական է, թէ որքան յաճախ փոխուելու հանդէպ դժկամութիւն դրսեւորած ենք՝ գուտ մարդկային էկոյի պատճառով: Դժուար է խոստովանել, որ այն, ինչ մինչեւ այս պահը ըրած ենք այլեւս տեղին չէ: Կամ գուցէ մենք չենք կրնար բաւական արագ ուղղութիւնը փոխել անց-

եալի ստեղծած թափի եւ «Այսպէս մենք միշտ ըրած ենք» պատճառաբանութեան պատճառով: Որոշ եկեղեցիներ խորտակուեցան, քանի որ չկրցան բաւական արագ իրենց ուղղութիւնը փոխել, երբ ակնյայտօրէն անհրաժեշտ էր այդ, կամ, ինչպէս «Տիտանիկը», սկսեցին շատ ուշ փոխել այդ: Ինչպէս նաւաստի-դիտորդներու խումբը, անոնք որոնց գործն էր անընդհատ առաջ նայիլը, պարզապէս չունէին հեռուն տեսնելու տեսլականը:

Եկէ՛ք խորաթափանց ըլլանք. երբեմն թուացեալ հաւատարմութիւնը ոչ այլ ինչ է, քան անճկունութիւնն ու նորի կամ տարբերի հանդէպ վախը: Աստուածաշունչը շատ յստակ կ'ընդգծէ, թէ որոնք են անսակարկելի ճշմարտութիւնները, բայց մեզ նաեւ տրուած է մեծ ճկունութիւն, թէ ինչպէս կը ներկայացնենք ու կը կիրառենք այդ ամէնը:

Քրիստոսը ծառայութեան սկզբնական շրջանին ժողովարաններու աւանդական միջավայրին մէջ կը սորվեցնէր: Ժամանակի ընթացքին Ան մերժուեցաւ յուդայականութեան իշխանութիւններու կողմէն: Քրիստոսը ժողովարաններուն մէջ այլեւս ողջունելի չէր: Ան նոր միջոցներ գտաւ: Ան սկսաւ սորվեցնել դաշտերուն, շուկաներուն կամ նոյնիսկ նաւակին մէջ: Երբ փոփոխութիւն մտցնելը կը խթանէր Անոր աշխատանքին առաջխաղացմանը, ապա Ան երբեք չէր վարանէր:

Ճոն Ուեսլին սկիզբը սարսափեցաւ, երբ Ճորճ Ուայթֆիլտը իրեն գրեց՝ առաջարկելով բաց երկնքի տակ քարոզել: Ուեսլին գրեց. «Հոգիներու փրկութիւնը համարեայ մեղք կը սեպէի, եթէ եկեղեցիի պատերէն ներս չ'ըլլար»: Փոփոխութեան պատրաստակամութիւնը կարեւոր գործօն էր իր կեանքի ու ծառայութեան աճի համար: Այն նոյնքան կարեւոր է մեզ համար: Փոփոխութիւնները տարօրինակ կը թուան, բայց միշտ այդպէս է, երբ կը սկսինք այլ կերպ գործել:

Ի՞նչ փոփոխութիւններու կը հրաւիրէ Աստուած մեզ այս պահին մեր անձնական եւ եկեղեցական կեանքին մէջ: Պատասխանի առաջին քայլը նշուած է Յայտնութեան գրքի 7 եկեղեցիներուն ուղղուած նամակներու իրաքանչիւրին մէջ. «Ան որ ականջ ունի, թող լսէ թէ Հոգին ի՞նչ կ'ըսէ եկեղեցիներուն» (Յայտ. 2:7): Ի՞նչ կ'ըսէ Հոգին Իր Խօսքի միջոցով այս պահին: Երբ փոփոխութեան մասին կը մտածենք, մեծ հարցը, որը պէտք է տանք ոչ թէ «Արդեօ՞ք մենք միշտ այսպէս ըրած ենք» հարցն է, այլ՝ «Արդեօ՞ք Աստուած է առաջնորդողը»:

Բարի համբալ

Մարկոս 14:3-9

Մարկոս 14:3-9 համարները կը խօսին կնոջ մը մասին որ Յիսուսի գլխուն վրայ պատուական իղ թափեց: Միմոնի տան մէջ գրտ-նրոտողներէն շատերը դժգոհ էին այդ իղին կորուստին համար եւ կը յանդիմանէին կինը ըսելով որ անոր ծախսը կրնար աղքատներուն տրուիլ: սակայն Յիսուս կ'ըսէ որ թող տան այդ կնոջ որովհետեւ ան բարի գործ մը կ'ըներ:

Այս համարները կարդալով նշմարեցի որ Աստուծոյ զօրութեան ներ-գործութեամբ համբալ ունենալու համար երեք գործնական պայման-ներ կան.-

1. Պէտք է ունենալ ներքին առաքինութիւն, որ Աստուծմէ կը տրուի մեզի:
2. Կարելոր է, որ մեր ունեցածը կիրարկուի, ի գործ դրուի:
3. Համբալ ունենալէ ետք, խոնարհ մնալու ենք:

Նախ եւ առաջ այս կնկան օրինակին երբ հետեւինք պիտի նկատենք որ ան անհատական ծառայութիւն մը ըրաւ: Մարդ չորկեց որ Յիսուսի ծառայէ, այլ ինք անձամբ գնաց Յիսուսի ծառայելու: Ուրեմն երբ ծա-ռայութիւն մը պիտի ընես՝ ներկայացուցիչ մի՛ փնտռեր: Դուն անձամբ ներկայացուր Զրիստոսը:

Երկրորդ՝ նիւթը – երբ կը ծառայես, ունեցածդ բան մը տալու ես: Այս կինը իր ունեցածը տուաւ: Կիսաթափանցիկ մարմարէ շիշին մէջ շատ արժեքաւոր անուշահոտ ունէր որ Յիսուսի համար գործածեց եւ Յիսուս ընդունեց զայն: Յիսուս կ'ընդունի ինչ որ ունիս: Եկուր Իրեն ինչպէս որ ես:

Երրորդ՝ հանրային վկայութիւն – ինչպէ՞ս պիտի կիրարկենք ինչ որ ունինք – հանրային վկայութիւնով: Շատ անգամ տեղեր գտնուած ենք ուր առիթը ընծայուած է մեզի եւ որ Տէրը ներկայացնենք սակայն դժ-բախտաբար լուռ մնացած ենք: Երբ հոգեւոր ընտանիքի մէջ ըլլանք բնական կը գտնենք Տիրոջ մասին բաժնեկցել, բայց կարելոր է որ այդ

ընենք մեր հոգեւոր շրջանակէն դուրս ալ: Այս կինը չ'ամչցաւ եւ գալով բոլորին առջեւ այդ ծառայութիւնը կամ վկայութիւնը ըրաւ: Յիսուս ընդունեց այդ ծառայութիւնը եւ խոստում տուաւ որ մինչեւ մեր օրը այդ կինը պիտի յիշուի: Այս բարի համբաւ է:

Այս պատմութեան մէջ երկու բարի համբաւ ունեցող տիպարներ ունինք – Յիսուս եւ կինը: Ինչպէ՞ս Յիսուս բարի համբաւ ունէր. նախ Ան Աստուծմէ եւ մարդոցմէ ստացած Իր շնորհը, իր սրտին մէջ պահելով անցաւ – ներքին առաքինութիւն (Ղուկ. 2:52): Երկրորդը՝ ժամանակի լեցունութեան մէջ կիրարկելու սկսաւ: Յիսուս երբ երեսուն տարեկան եղաւ գործի լծուեցաւ: Սուրբ Խօսքը կ'ըսէ թէ Ան կը պտըտէր բարիք ընելով եւ Աստուծոյ Խօսքը քարոզելով: Մեր ներքին առաքինութիւնը ինչպէ՞ս կրնանք ի գործ դնել – Յիսուսի նման գործի լծուելով եւ կատարելով: Երրորդ՝ Յիսուս խոնարհութեան տիպարը եղաւ մեզի համար, հակառակ որ Ան Աստուած էր, Իրմէ բարձրը չկար: Մենք պէտք է խոնարհինք որովհետեւ Աստուած մեզմէ շատ բարձր է, մեզի չվայելէր հպարտութիւն, որովհետեւ միայն Ան արժանի է ամէն փառքի եւ պատիւի:

Սուրբ Հոգին Պօղոս առաքեալի միջոցաւ մեզի շատ կարեւոր խորհուրդ մը կուտայ: Բ Կորնթ. 10:17-18 համարները կ'ըսեն. «Ով որ կը պարծենայ, Եհովայով թող պարծենայ, քանի որ ընտրեալը ան չէ որ ինքզինք կը ներկայացնէ, այլ ան՝ գոր Տէրը կը ներկայացնէ»: Թող Աստուած քեզ ներկայացնէ, Աստուծոյ ներկայացուցիչը եղիր, թող մի տար որ ուրիշ մը առջեւէդ երթալով քեզ ներկայացնէ, որովհետեւ խոնարհութիւնդ հպարտութեան կը վերածուի: Ամենամեծ մեղքը որ Արուսեակը ըրաւ՝ սաստանայի վերածուիլն էր՝ իր հպարտութեան պատճառով:

Ի՞նչ է «բարի համբաւ» հասկացութիւնը: Այդ սքանչելի ինչք մըն է, օրինակ Առակաց 22:1-ի մէջ կը կարդանք. «Բարի անունը (համբաւը) շատ հարստութենէն ընտիր է, ու շնորհքը արծաթէն ու ոսկիէն աղէկ է»: Ներքին առաքինութիւնը ուրեմն ինչք մըն է: Համբաւը պատիւի վրայ հիմնուած է: Ուրիշ օրինակ մը կը կարդանք Բ Կորնթ. 8:18-24-ի մէջ, եղբօր մը բարի համբաւին մասին: Նաեւ Դանիէլ 6:4-8-ի մէջ կը կարդանք որ չարերը կատեն բարի համբաւը. «Կուսակալներ եւ հրամանատարներ թագաւորութեան գործերուն մէջ Դանիէլի դէմ զան-

գատելու պատճառ մը կը ջանային գտնել: Անոնք բնաւ պատճառ մը կամ չարութիւն մը չկրցան գտնել անոր վրայ որովհետեւ ան հաւատարմութիւն էր»:

Կան նաեւ «համբաւներ» որոնք Աստուծոյ չեն եւ վնասներ կը հասցընեն .-

Ա. Տիեզերական գովասանք – Ղուկ. 6:26-ի մէջ Յիսուս ըսաւ. «Վա՛յ ձեզի երբ մարդիկ ձեր վրայով աղէկ խօսին, վասն զի իրենց հայրերը այդպէս կ'ընէին սուտ մարգարէներուն»:

Բ. Փաղաքական խօսքեր – պետք է հեռու մնալ անոնցմէ որոնք կեղծօրէն կը գգուեն ձեզ: Հռովմ. 16:18 «Խորշեցէք (փախուստ տուէք գգուելով) անոնցմէ որովհետեւ այդպիսիները ոչ թէ Տիրոջ՝ Քրիստոսի կը ծառայեն, այլ իրենց որովայնին եւ քաղցրախօսութեամբ ու կեղծ գովասանքով կը հրապուրեն անմեղներու սրտերը»:

Գ. Աշխարհային ընկերակցութիւն – Յակոբոս 4:4-ի մէջ կ'ըսէ. «Ով որ կ'ուզէ աշխարհը սիրել, ինքզինքն թշնամի կը դարձնէ Աստուծոյ»:

Դ. Անհոգութեան առարկայ դառնալ – Երբ աստուածային համբաւ չէ ունեցած համբաւդ, Գաղատացիս 2:6-ի մէջ կ'ըսէ. «Անոնք որ կը կարծէին իրենք բան մըն են (եթէ բան մըն ալ եղած ըլլային հոգս չէ, որովհետեւ պարապ է, քանի որ Աստուած աշառութիւն չ'ըներ մարդոց), այդ երեւելիները նման բան մը չ'իմացուցին ինծի»: Պօղոս առաքեալ ըսել կ'ուզէ թէ այդ երեւելիներուն ըսածները Աւետարանին ճշմարտութեան հակառակ էին եւ կը կարծէին թէ իրենք բան մըն են: Ոչ աստուածային համբաւներ են ասոնք եւ Աստուած այս տեսակ բաներէն կը զգուի:

Յիսուս բարի գործեր ըրաւ որպէսզի պատիւը Աստուծոյ երթայ: Մաքուր կենցաղ ունեցաւ, որովհետեւ Աստուծոյ ներկայացուցիչն էր եւ խոնարհ կեանք ապրեցաւ:

Կ'ուզե՞ս բարի համբաւի տէր դառնալ, կ'ուզե՞ս քու պատճառով Տիրոջ անունը փառաւորուի եւ ոչ հայիոյնի: Ուրեմն պետք է ըլլաս խոնարհ, պատրաստակամ, տրամադրելի, եւ յօժարակամ Տիրոջմէ գործածուելու: Ինչպէս Հայր Աստուած գործածեց Քրիստոսը, Սուրբ Հոգին ալ Իր խօսքին միջոցաւ կը գործածէ այս կիմը, որպէսզի մեզի օրինակ ըլլայ:

Ներսէս եղբ. Պոյաճեան

Հարուստ մեռնիլ ուզող նաւաստին

Տարիներ առաջ Բրիտանական նաւ մը Սպանական ոսկի կը փոխադրէր խիստ հսկողութեան տակ:

Ճամբորդութիւնը յաջող էր, նաւին անձնակազմը շատ ուրախ: Սակայն օր մը նաւը յանկարծ ջուրով հսկայ ժայռի մը բախուելով՝ ծակեցաւ եւ իսկոյն սկսաւ ջուր լեցուցիլ մէջը: Այսպիսի պարագաներու մէջ բնական է շփոթութիւն եւ իրարանցում կ'ըլլայ: Վտանգուած նաւը փրկելու ամէն միջոց ապարդիւն անցաւ, բայց նորէն ալ անոնք չմոռցան արժէքատուր ոսկիի տակառները վեր հանել: Բոլորն ալ կրցան վեր հանել ու տախտակամածին վրայ շարել՝ զանոնք ազատելու մեծ յոյսով: Նաւը սակայն հետզհետէ ջուրով լեցուեցաւ: Ազատութեան ամէն յոյս վերջացած ըլլալով՝ ազատարար նաւականերով ծով իջեցուցին, մարդիկը ծովամոյն ըլլալէ փրկելու համար:

Հսկողութեան տակ առնուած ոսկիի տակառները ալ արժէք մը չէին ներկայացներ: Այդ պահուն իրենց կեանքը ամէն բանէ աւելի արժէքատուր դարձած էր: Բոլոր նաւակները լեցուեցան մարդոցմով: Վերջին նաւակը երբ ծով կ'իջեցնէին, երիտասարդ նաւապետ սպան նաւակ մըրտնելէ առաջ՝ պահ մը կեցաւ, քննական ակնարկ մը նետեց նաւուն բոլոր կողմեր, իբր պարտականութիւն իր պաշտօնին հաւատարմութեան, վստահ ըլլալու համար թէ մէկը մնացած չէ հոն: Բայց ի՞նչ զարմանք, տեսաւ մէկը տախտակամածին վրայ նստած՝ հանդարտօրէն մուրճով ոսկիի տակառները կը բանար եւ իր շուրջը կը դիզէր դեղին մետաղները:

- Ի՞նչ կ'ընես հոդ, ով մա'րդ, պոռաց սպան բարձր ձայնով, ի՞նչ բանի վրայ կը մտածես: Չե՞ս տեսներ որ ջուրին մէջ կը թաղուի նաւը:

- Ինչ կ'ուզէ թող ըլլայ, ըսաւ մարդը, իմ հոգս չէ նաւը կընկղմի, թէ ոչ: Ես կեանքիս բոլոր ընթացքին աղքատ ապրած եմ, բայց հիմա որոշած եմ հարուստ մեռնիլ, պատասխանեց անմիտ մարդը:

Սպան իր բոլոր ջանքը ի գործ դրաւ մարդը համոզելու որ նաւակ մտնէ, բայց անօգուտ: Ան իր որոշման մէջ անդդողուելի մնաց ու շարունակեց իր աշխատանքը: Ազնիւ սպան տեսաւ, թէ չկրնար խօսք հաս-

կըցնել յամառ մարդուն, ձգելով զայն իր բախտին՝ իջաւ փրկութեան նաւակը ու հեռացաւ նաւէն: Հեռուէն անոնք կըցան տեսնել, թէ ան ինչպէս իր յիմար աշխատանքը կը շարունակէր՝ ոսկիի կոյտերուն մէջ նստած: Ազատարար նաւակները բաւական հեռացած էին եւ ալ չէին երեւեր ո՛չ նաւը, ո՛չ մարդը, ո՛չ ալ ոսկիի տակառները: Բոլորն ալ թաղուեցան ջուրին մէջ:

Սիրելի՛ ընթերցող, կը տենե՞ս թէ այս անմիտ նաւաստին ինչ մեծ յիմարութիւն գործեց: Անօգուտ հարստութեան խաբէութենէն տարուելով՝ իր ազատութիւնը, իր փրկութիւնը մերժեց: Նախընտրեց պահ մը հարուստ ըլլալ, կորստական ոսկիներուն մէջ մնալ որպէս իրը, եւ ապա կորսուի անոնց հետ եւ անոնց համար յաւիտեան: Ասիկա է պատկերը մարդկութեան մեծամասնութեան: Ոմանք աշխարհի հաճոյքներուն ու մեղքի գուարճութեան ետեւէն վազելով, ոմանք ալ հարստութեան խաբէութենէն տարուելով՝ կը մոռնան իրենց յաւիտենական կեանքը, կը մոռնան իրենց մեծ փրկութիւնը: Կը մերժեն խաչեալ եւ յարուցեալ Քրիստոսը, որ թողութիւն, փրկութիւն եւ խաղաղութիւն կուտայ բոլոր Իրեն եկողներուն:

Պատուական հոգի, դուն որ հիմա այս տողերը կը կարդաս, չըլլայ, որ այս մեծ փրկութիւնը մերժողներէն մէկը դուն ըլլաս: Չըլլայ որ այս աշխարհի կախարդիչ բաներուն ետեւէն վազելով՝ քեզի համար մեռնող Յիսուս Քրիստոսը եւ Անոր ձրի փրկութիւնը ոտնակոխ ընես ու յաւիտեան կորսուիս:

Քաղուած՝ «Զմայլելի դրուագներ» գիրքէն

«Իրաւընէ անիկա մեր ցաւերը վերցուց ու մեր վիշտերը իր վրայ առաւ:

Մենք զանիկա վիրաւորուած, Աստուծմէ զարնուած ու չարիքի հանդիպած սեպեցինք: Բայց անիկա մեր մեղքերուն համար վիրաւորուեցաւ եւ մեր անօրէնութիւններուն համար ծեծուեցաւ: Մեր խաղաղութեան պատիժը անոր վրայ եղաւ եւ անոր վէրքերովը մենք բժշկուեցանք»:

Եսայի 53:4-5

Յիսուսին հետեւիլ

Տիկին մը հովիւին մօտեցաւ ըսելով. «Ես այլևս եկեղեցի պիտի չյաճախեմ»:

Հովիւը հարցուց.- կրնա՞մ արդեօք պատճառը հասկնալ:

Տիկինը պատասխանեց. «Պաշտամունքի ժամանակ կը տեսնեմ մարդիկ մտած են իրենց բջջային հեռախօսներուն մէջ, ոմանք կը բամբասեն, ոմանք պարզապէս քրիստոնէական կեանքով չեն ապրիր... բոլորն ալ կեղծաւորներ են»:

Հովիւը պահ մը լուռ մնաց, եւ ապա շարունակեց ըսելով. «Շատ լաւ... բայց կրնա՞մ ձեզմէ բան մը խնդրել նախքան վերջնական որոշում կայացնելը»:

Ան ըսաւ. «Իսկ ի՞նչ կ'ուզէք, որ ընեմ»:

Հովիւը ըսաւ. «Գաւաթ մը ջուր վերցուցէ՛ք եւ երկու անգամ շրջեցէ՛ք եկեղեցիին մէջ՝ առանց ջուրը գետինն թափուելու»:

Ան ըսաւ. «Այո՛, ես կրնամ ընել այդ»:

Որոշ ժամանակ անց տիկինը վերադարձաւ և ըսաւ, թէ առաջադրանքը կատարուած է:

Հովիւը անոր երեք հարց տուաւ.

1. Ինչ-որ մէկուն տեսա՞ք հեռախօսին մէջ մտած:
2. Ինչ-որ մէկուն տեսա՞ք բամբասանքով զբաղուած:
3. Ինչ-որ մէկուն տեսա՞ք, որ սխալ կեանքով կ'ապրի:

Ան ըսաւ. «Ես ոչինչ չտեսայ, քանի որ այնքան կեղրոնացած էի այս գաւաթին վրայ, որպէսզի ջուրը չթափուի»:

Հովիւը պատասխանեց. «Երբ եկեղեցի կուգաք, պէտք է ճիշդ այդքան Աստուծոյ վրայ կեղրոնացած ըլլաք, որպէսզի չիյնաք: Ահա թէ ինչու Յիսուս ըսաւ՝ «Հետեւէ՛ Ինձի»: Ան չըսաւ քրիստոնեաներուն հետեւէ: Թոյլ մի՛ տուէք, որ Աստուծոյ հետ ձեր յարաբերութիւնները սահմանուին ուրիշներու՝ Աստուծոյ հետ ունեցած յարաբերութիւններով: Մտածէ՛ք թէ որքանո՞վ կեղրոնացած Աստուծոյ վրայ»:

«Յիսուսին նայինք՝ մեր հաւատքին առաջնորդին ու կատարողին» (Եբր. 12:2):

Քաղուած

Հիւանդանոցի պատուհանը

Երկու լուրջ հիւանդներ հիւանդանոցի նոյն սենեակը կը մնային: Մարդոցմէ մին, օրը մէկ ժամ արտօնեալ էր նստելու մահիճին մէջ, որպէսզի թոքերուն մէջի հեղուկը պարպուի: Միւս մարդը պէտք էր ամբողջ օրը կռնակի վրայ պառկէր: Երկուքը ժամերով կը խօսէին իրարու հետ: Անոնք կը պատմէին իրենց ընտանիքներուն եւ գործերուն մասին: Նաեւ կը բաժնեկցէին բանակին մէջ իրենց ունեցած ծառայութեան եւ արձակուրդի գացած վայրերուն մասին:

Ամէն կէսօրէ ետք, պատուհանին մօտ եղող հիւանդը երբ կը նստէր իր ժամանակը կ'անցնէր սենեակիցին բացատրելու այդ ամէն բաները որ կը տեսնէր պատուհանէն դուրս: Միւս անկողինին մէջի մարդը, երբ կը լսէր այս բաները շատ կ'ուրախանար:

Նստած հիւանդը կը պատմէր թէ պատուհանը հանրային պարտէզի մը կը նայէր ուր գեղեցիկ լճակ մը կար: Բաղեր եւ սագեր ջուրին մէջ կը լողային, մինչ փոքրիկները նստակներով կը խաղային: Սիրահարներ թեւ թեւի մտած կը զբօսնէին գունագեղ ծաղիկներու ընդմէջէն եւ հեռուն քաղաքին գեղեցիկ հեռանկարը կը տեսնուէր:

Այս ամէն մանրամասնութիւնները լսած ատեն, միւս անկողինին մէջ գտնուող մարդը աչքերը կը գոցէր եւ երեւակայութեամբ կը տեսնէր այդ զմայլելի տեսարանները:

Տաքուկ օր մը, ան նկարագրեց անցնող տողանցք մը: Թէեւ միւս հիւանդը չէր լսէր նուագախումբը, բայց մտովին կը տեսնէր այդ ամէնը որ բարեկամը կը բացատրէր բառերով:

Օրեր եւ շաբաթներ անցան եւ առտու մը, երբ հիւանդապահուիին ջուր բերաւ հիւանդները մաքրելու, ան պատուհանին կից գտնուող մահիճին մէջ գտաւ հիւանդին անշնչացած մարմինը: Մարդը խաղաղութեամբ մահացած էր քունին մէջ: Բոյժքոյրը տխրեցաւ եւ խնդրեց յատուկ պաշտօնեաներէն որ վերցնեն դիակը:

Ամիջապէս որ ժամանակը յարմար էր, միւս մարդը խնդրեց որ զինք պատուհանին մօտի անկողինը փոխադրեն: Հիւանդապահուիին ուրա-

խութեամբ կատարեց փոխանակումը եւ հիւանդը տեղափոխել վերջ, զայն առանձին թողուց: Այն ատեն հիւանդը կամացուկ մը ցատոյ մարմնով արմունկին վրայ յենեցաւ եւ առաջին ականարկը նետեց դուրսի իրական աշխարհին: Ան դժուարաւ դէմքը դարձուց պատուհանէն դուրս նայելու համար: Բայց ինչ տեսնէ – պարապ պատ մը:

Շատ ապշանքով հարցուց բոյժբոյրին թէ արդեօք ի՞նչ բանը ստիպած էր իր մահացած սենեակակիցը որ այդպէս հրաշալի բաներ նկարագրէ: Հիւանդապահուիին ալ զարմանքով պատասխանեց թէ այդ մարդը աշագործ էր եւ նոյնիսկ պատը չէր կրնար տեսնել: Ուստի, ան եզրակացուց ըսելով. «Հաւանքար ան կ'ուզէր քեզ ուրախ պահել եւ քաջալերել»: «Արդ՝ եթէ դուք արքայական օրէնքը կը կատարէք զոքին ըսածին համեմատ, թէ՛ «Քու ընկերդ սիրես քու անձիդ պէս, աղէք կ'ընէք»» (Յակ. 2:8):

Քաղուած՝ «Աւետաբեր Ձիթենին» գիրքէն

Տասը պատուիրաններէն անդին

- Հոգ մի՛ ըներ... հոգ ընելը ապարդիւն է (Մաղ. 55:22, Փիլ. 4:6-7):
- Մի՛ վախճար... վախերդ շատերը չեն իրականանար (Բ Տիմ. 1:7):
- Երբ հարցի մը առջեւ ըլլաս, այն ատեն մտածէ անոր մասին (Մատթ. 6:34, Յակ. 4:13-15):
- Օրը օրին ապրէ եւ բեռդ կրէ (Մատթ. 6:34, Յակ. 4:13-15):
- Հանգիստ քնացիր – նիւթերդ անկողին մի՛ տանիր (Եփես. 4:26-27, Կող. 3:8-10):
- Աշխարհի դժուարութիւնները կրել մի՛ ջանար (Հռովմ. 14:12):
- Լաւ լսող եղի՛ր... ուրիշներուն ըսածին մտիկ ըրէ (Յակ. 1:19-20):
- Երեկուան մասին մի՛ մտածեր... այս օրը ապրէ եւ ուրախ եղիր (Մաղ. 118:24, Բ Կորնթ. 5:17):
- Դժգոհութեան հոգին մարէ, ինքզինքիդ վրայ մի՛ մեղքանար (Մաղ. 42:11):
- Ամէն օր օրհնութիւններդ թուէ՛ (Մաղ. 103:1-5):

Քաղուած՝ «Աւետաբեր Ձիթենին» գիրքէն

Փոքր հաւատքը կրնայ լեռներ տեղաշարժել

ACM-ի գործը սկսաւ մօտաւորապէս 24 տարի առաջ: Սկսանք ամսական \$100-ով, չիմանալով թէ ուր պիտի հասնինք: Հետ նայելով մենք միայն կրնանք տեսնել, թէ ինչպէս Աստուած հոգաց ու ապահովեց Իր ծառայութեան կարիքները: Մենք օրհնուած ենք այս ամէնուն ականատես ըլլալու համար: Հայ քրիստոնէական առաքելութեան նպատակն է՝ Աւետարանը հասցնել Հայաստանի կարիքաւորներուն:

Հայաստանի մեծութեամբ երկրորդ քաղաք համարուող՝ Կիւմրիի մէջ մենք ունինք աւետարանչատուն մը, որը կը ծառայէ Կիւմրիի, Սպիտակի եւ Վանաձորի բնակիչներուն: Հայաստանի մայրաքաղաք Երեւանի մէջ Տէրը վերջերս նոր շինութիւն մը պարգեւեց մեզ, որը պիտի ծառայէ որպէս վարչական գրասենեակ: Այժմ մենք ունինք չորս ամբողջ ժամանակով եւ հինգ կէս ժամանակով աշխատող ծառայակիցներ: Մի քանի գիւղերու մէջ կանոնաւոր կերպով կ'անցկացնենք Աստուածաշունչի սերտողութեան բազմաթիւ խմբակներ թէ՛ չափահասներու եւ թէ՛ մանուկներու համար՝ ներգրաւելով բազմաթիւ կամաւորներ: Մենք նաեւ Ստեփանակերտի մէջ աշխատակից ունինք, որը հոգ կը տանի պատերազմէն տուժած եւ մեր հովանաւորութեան տակ գրտնդուող ընտանիքներուն:

Որոշ գործունէութիւններ, որը վերջերս կատարեցինք

Մանուկներ. ութ տարբեր գիւղերու աւելի քան 600 մանուկներ մասնակցեցին աւետարանչական քարոզարշաւին: Մենք երախտապարտ ենք այս ամէնուն համար եւ օրհնուած՝ տեսնելով մանուկներու ուրախութիւնը, երբ կը երգեն ու Աստուծոյ Խօսքը կը սորվին:

Աստուածաշունչի սերտողութեան խմբակներ. Տիրոջմով կ'ուրախանանք տեսնելով, թէ ինչպէս աւելի ու աւելի մարդիկ կուգան Տիրոջ մօտ: Որոշները շուտով պիտի մկրտուին:

Գրականութիւն. մենք միշտ կը փորձենք քրիստոնէական գրականութիւն ապահովել Հայաստանի համար: Երբեմն տարբեր երկրներու մէջ հրատարակուած գրականութիւնը կը թարգմանենք հայերէնի ու կը տպագրենք այն: Ամբողջ գրականութիւնը անվճար կը տրամադրուի

բոլոր փափաքողներուն՝ ներառեալ Աստուածաշունչ եւ «Ազդարարութեան Փող» երկամսեայ թերթը, որը կը բաշխուի բազմաթիւ եկեղեցիներու:

Հիւանդներու ծառայութիւն. սա կարելոր էր ամենաթանկ ծառայութիւններէն մէկն է մեզ համար, քանի որ կ'օգնենք դեղորայքի եւ վիրահատութեան ծախսերը:

Զմեռուայ վառելիք. ձմեռը բաւական դաժան է Հայաստանի մէջ, առատ ձիւնով, երբեմն մինչեւ -35° ջերմաստիճանի կը հասնի: Կարիքաւոր որոշ ընտանիքներ մետաղեայ տնակներու մէջ կ'ապրին, այնպէս որ, այսպիսի ընտանիքներու համար ձմեռանը ջերմութիւն ապահովելը կենսական հարց է մեզի համար:

Գիւղացիներուն օգնութիւն. որոշ գիւղացիներու կ'օգնենք՝ կենդանիներ նուիրաբերելով, ջերմոցներ կառուցելով կամ ցանելու սերմեր տրամադրելով:

Ուղղերեւոյ ծառայութիւն. Աստուծոյ կամքով, 25-րդ ուղղերեւոյ շուտով պիտի ճամփենք Հայաստանի աղքատներուն բաշխելու համար:

Աղօթքի կէտեր.

- Աղօթեցէ՛ք մեր մեքենաներէն մէկը փոխելու համար, որը ծառայեց այս վերջին ութ տարիներուն:
- Աղօթեցէ՛ք մեր նոր շէնքի վերանորոգման եւ կահաւորման ծախսերու համար:
- Աղօթեցէ՛ք երկու հիւանդ գաւաւկ ունեցող անապահով ընտանիքի տան վարձքի համար:
- Աղօթեցէ՛ք Օգոստոսին Հայաստան այցելող մեր միսիոներական խումբի համար:
- Աղօթեցէ՛ք Սիւնիյի մէջ պահեստ ունենալու համար, որն այնքան անհրաժեշտ է ուղղերեւոյ ծառայութիւնը կազմակերպելու համար:

Մենք ուրախ ենք ձեզ այցելելու Աւստրալիա կամ ԱՄՆ: Եթէ հետաքրքրուած էք եւ կը փափաքիք մեր աշխատանքը ներկայացնել ձեզ, ապա կը խնդրենք մեզ հետ կապ հաստատել info@acmaust.org հասցէով: